

ИСТОРИЯ

Ղուկաս Կարնեցու քաղաքական հայեցակարգը Հայաստանի ազատագրության վերաբերյալ (XVIII դ. վերջ)

Ամիրջանյան Հ. Հ.

ավագ գիտաշխատող, պգթ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, Հայաստան)

amirjanyan.hasmik@rambler.ru

Վճռորոշ բառեր՝ Ամենայն հայոց կաթողիկոս, հայկական թեմ, քաղաքական, թեմակալ առաջնորդ, ռուսական կառավարություն, Գ. Պոտյոմկին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, քաղաքական հայեցակարգ, նամակագրություն, պետական:

Вопросы освобождения армении в политической теории Гукаса Карнеци (конец XVIII в.)

Амирджанян А. О.

Институт истории НАН, старший сотрудник, кандидат ист. наук (Ереван, Армения)

amirjanyan.hasmik@rambler.ru

Аннотация. Видный государственный и религиозный деятель, Католикоса Всех армян Гукаса Карнеци (1780-1899) за годы русско-турецкой войны (1787-1791) отправил множество рапорта и письма руководствам русского военного ведомства, обсуждая вопросы освобождения Армении от турецко-персидского иго.

Эти вопросы Карнеци обсуждал также с армянскими общественными деятелями. В письмах выражены разнообразия политических теории разных армянских деятелей, их переживания и отношение к политическим и религиозным проблемам армянского народа.

Эти письма очень интересны для изучения национально-освободительной движения армянского народа.

Ключевые слова. Католикос Всех армян, Армянская епархия, политический, епархиальный предводитель, российское правительство, Г. Потемкин, Кафедральный Собор Св. Эчмиадзин, политическая теория, переписка, государственный.

The Question of the Liberation of Armenia in the Political Theory of Ghukas Karneci (at the end of the XVIII c.)

Amirjanyan H. H.

Senior researcher at the Institute of History of the RA National Academy of Sciences

Candidate of Historical Sciences (Erevan, Armenia)

amirjanyan.hasmik@rambler.ru

Abstract. The prominent political and religious figure Catholicos of All Armenians Ghukas Karneci (1780-1899) during the Russian-Turkish War (1787-1791) send a lot of reports and letters to Russian military figures and discussed the question of the liberation of Armenia from the Turkish-Persian yoke.

G. Karneci discussed the question of the liberation of Armenia also whit armenian social figures. The letters depict the defferends of political theori the armenian figures, their feelings and attitude to the problems they are worried about political and religions life of armenian people. These letters are veri interesting for studying Armenian national-liperation movement.

Key words. Catholicos of All Armenians, Armenian eparchy, political, the leader of the Armenian Eparchy, the Russian govermant, G. Potyomkin, The Cathedral of Holy Etchmiadzin, the political theory, The letters, state.

XVIII դ. Արևելյան Հայաստանում կենտրոնական իշխանության բացակայության և պարսկական տիրապետության պայմաններում, ինչպես հայտնի է, որպես բնակչությանը համախմբող ուժ, կարևորվում էր Էջմիածնի դերը: Հայ կաթողիկոսներն ակտիվ գործունեություն էին ծավալում երկրի ոչ միայն սոցիալ-տնտեսական և մշակութային, այլև քաղաքական կյանքում:

Աստիճանաբար ավելի է ընդգծվում Հայոց կաթողիկոսի դերի կարևորությունը դարավեր-

ջին սկսված ռուսական այսրկովկասյան արշավանքներին աջակցելու տեսանկյունից: Դա հասկանալի է դառնում, եթե վերհիշենք, որ այդ ժամանակաշրջանում հայ ազատագրական շարժման կարևոր միտումներից մեկը ռուսական զենքի օգնությամբ պարսկա-թուրքական տիրապետությունից հայ ժողովրդի ազատագրումն էր: Ժամանակի հայ ազգային գործիչների (Ս. Տեր-Սահակյան, Հովսեփ Արղության, Հովհաննես Լազարյան, Շահամիր Շահամիրյան և այլք)

համար անկյունաքարը նորընտրյալ Ղուկաս Կարնեցի (1780-1799) կաթողիկոսի ակտիվ քաղաքական գործունեությունն էր, ինչն իր արտահայտությունը գտավ վերջինիս հետ նամակագրության մեջ:

Կարնեցու գահակալության առաջին օրերից սկսած Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը (1773-1801) նրան խորհուրդ է տալիս նամակագրական կապ պահպանել ռուս պետական ու հոգևոր գործիչների հետ, վերջինների հետ բանակցել Հայաստանի ազատագրության վերաբերյալ:

Նոր թեմակալ առաջնորդը սակայն, ռուսներին ընդառաջելու հարցում հանդես բերեց ծայրահեղ գգուշավորություն, հատկապես, երբ դրվում էր դեպի հարավ արշավող ռուսական զորքին աջակցություն ցուցաբերելու հարցը: Գահակալության առաջին շրջանում Ղուկաս Կարնեցու նամակներն՝ ուղղված ռուս պետական գործիչներին, գրեթե միանման՝ շնորհակալական ու բարեմաղթանքային բովանդակություն են կրում: Այսպես օրինակ, 1781 թ. Հունվար-փետրվար ամիսներին Կարնեցին նամակներ է գրում Ազովի նահանգապետ, գեներալ-պորուչիկ Վասիլի Չերտկովին և Նոր Նախիջևանի պարետ, գեներալ-մայոր Սիմեոն Գուրևին՝ շնորհակալություն հայտնելով Նոր Նախիջևանի¹ բնակիչներին հատկացված տնտեսական աջակցության համար և խնդրում այսուհետև ևս բարեհաճ գտնվել հայերի հանդեպ [5; 6]:

1782 թ. հունվարին Կարնեցին նամակներ է գրում գեներալ, իշխան Գ. Պոսոյմկինին², վերջինիս ազգական, գեներալ Պավել Պոսոյմկինին, կոմս, գեներալ-ֆելդմարշալ Պյոտր Ռուսյանցևին, կոմս Նիկիտա Պանինին (արտաքին քաղաքականության հարցում Եկատերինա Երկրորդի (1762-1796) խորհրդականը), գեներալ Վլադիմիր Դոզորուկովին և այլոց՝ շնորհակալություն հայտնելով հայ ժողովրդի, Մ. Աթոռի և հայության հանդեպ տաճած բարեկամական վերաբերմունքի համար [5; 13; 15]:

1780 թ. հունվարի 30-ին և 1783 թ. հունվարի 17-ին³ նույնաբովանդակ նամակներ հղելով գեներալ Գ. Պոսոյմկինին, Կարնեցին գրում է, որ հայերի ազգային հարցերի վերաբերյալ ռուսական արքունիքին կծանուցեն Յակոբ Ռեյնեգսն (ռուս պետական գործիչների գործակալը, ում միջոցով երբեմն կատարվում էր նամակա-

տարությունը) ու ռուսական արքունիքում մեծ հեղինակություն վայելող Հովհ. Լազարյանը: Խնդրում է վերջիններին աջակցել Հայաստանի վերաբերյալ բանակցություններում⁴:

Ինչպես տեսնում ենք, կաթողիկոսի նամակները գգուշավոր են և ակնարկային: Ծիշտ է, նրա քաղաքական հայացքներում մշտապես առկա էր Հայաստանը Ռուսաստանի օգնությամբ ազատագրելու հայեցակարգը, սակայն որպես հայության անվտանգության երաշխավոր, կաթողիկոսը ձգտում էր կտրուկ գործողություններով չգրավել Երևանի խանի և պարսիկների ուշադրությունը⁵: Ահա ինչու որոշ նամակներ միայն ժատ ակնարկներ են պարունակում նրա տեսակետների վերաբերյալ, իսկ որոշները, ինչպես օրինակ 1781 թ. գրած, բացահայտորեն արտահայտում են կաթողիկոսի ձգտումները՝ Այսրկովկասում Ռուսաստանի տիրապետության տարածման և Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատագրելու հարցում [5; 15]:

Ղ. Կարնեցու դիրքորոշումը մեծապես կախված էր ժամանակի կարևորագույն իրադարձություններից: Նա ուշի ուշով հետևում էր ընթացող ռուս-թուրքական (1787-1791) պատերազմի ընթացքին՝ փորձելով հասկանալ, թե դրա արդյունքում հաշտություն կկնքվի՞ թուրքերի հետ, թե՛ ոչ [5]: Կարնեցին մտավախություն ուներ, որ ռուսների հետ հաշտություն կնքելով, թուրքերն ու պարսիկները դարձյալ գործելու ազատություն կստանային Հայաստանում:

Ռուս պետական գործիչներն իրենց հերթին միջոցներ են ձեռք առնում կապեր հաստատելու Հայոց կաթողիկոսի հետ՝ ինչը վերջինիս ակտիվ քաղաքական գործունեության մեջ ներքաշելու և նրա միջոցով տեղի ժողովուրդների վրա ներգործելու մտայնությունն ուներ: Հյուսիսային Կովկասի բանակի գլխավոր հրամանատար նշանակված գեներալ Պ. Պոսոյմկինը 1782 թ. ժամանելով Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոց, այդտեղից նամակագրական կապեր է հաստատում Ղուկաս Կարնեցու հետ [15]:

Գ. Պոսոյմկինը 1782 թ. վերջերին և 1783 թ. սկզբներին Այսրկովկաս է ուղարկում իր ներկայացուցչին, որը հայ գործիչների հետ բանակցում էր Ռուսաստանի ռազմական օգնությամբ

¹ Նոր-Նախիջևանի հայկական գաղթօջախը, որն ընդգրկված էր Ազովի նահանգի կազմում, ձևավորվել էր 1770-ական թթ. վերջերին՝ Արիմից գաղթած հայերի կողմից:

² Գ. Պոսոյմկինը (1739-1791) Հարավային Ռուսաստանի կառավարիչն էր, Նովոռոսիյսկի, Ազովի և Աստրախանի գեներալ-նահանգապետը:

³ Մույն նամակը Մ. Ներսիսյանի խմբագրականում թվագրված է 1789 թ.: [13, փոխ. 247, c. 379-380]:

⁴ 1780 թ. հունվարից Պետերբուրգում ռուս քաղաքական-ռազմական գործիչների հետ ընթանում են խորհրդակցություններ Հայաստանի վերաբերյալ, որին հայերի կողմից մասնակցում էին Հովհ. Լազարյանն ու Հովսեփ Արղությանը: [13, փոխ. 117, c. 195, փոխ. 127, c. 208; 5, էջ 290-292, 15, c. 55].

⁵ Կարնեցու թողած մեծածավալ ձեռագրային հավաքածուի մեջ քաղաքական բովանդակության հատվածները շատ քիչ են և համառոտ: Անգամ որոշ նամակների սևագրությունների մեջ քաղաքական իրադարձությունների նախնական նկարագրությունները ջնջված-հանված են, որպեսզի դրանք հետագայում մաքրագրի մեջ տեղ չգտնեն: [3, թ. 7ա]

Հայաստանը ազատագրելու խնդրի շուրջ: Էջմի-
ածնում գաղտնի խորհրդակցություն է հրավիր-
վում, որտեղ կաթողիկոսն ու մյուս մասնակից-
ները հավաստում են իրենց հավատարմությունը
ռուսական գահին, հայցում նրա հովանավորու-
թյունը և խնդրում գործ ուղարկել՝ ստանձնելով
դրա պարենավորումը [11]:

1783 թ. փետրվարի 15-ին, ապրիլի 10-ին և
հունիսի 2-ին Պ. Պոտյոմկինը հատուկ նամակ-
ներ է գրում կաթողիկոսին, որում ներկայացնում
է ռուսական արշավանքի ընթացքում հայերից
աջակցություն ստանալու ակնկալիքները, այդ
թվում՝ հայ բնակչության շրջանում նախապատ-
րաստական աշխատանքներ տանելու, ռուսա-
կան գործը պարենամթերքով ապահովելու վ-
երաբերյալ [13]: «...Այս գործը (ռուսական բանակը
- Հ. Ա.) բազմաթիվ է, նա կպահանջի հարկավոր և
անհրաժեշտ կերակուր: ...Ձեզ, սրբազան Տեր, ես
խնդրում եմ հրամայել կամ պատրաստել բնա-
կիչներին, որպեսզի այն զինվորները, որոնք գնում
են նրանց ազատելու, ուտելիքի պակասություն
չունենան» [10], - գրում է Պ. Պոտյոմկինը՝
պահանջելով նաև իրեն ծանուցել տարածա-
շրջանում ընթացող քաղաքական կարևոր
իրադարձությունների մասին:

Կաթողիկոսը շրջահայացորեն վերաբերվե-
լով ռուսական պահանջներին, պատասխանում
է, որ ինքը հոգևորական է և հեռու քաղաքական
գործերից: Նա պարզաբանում է նաև, որ նախա-
պատրաստական աշխատանքները կգրավեն
պարսիկ իշխանությունների ուշադրությունը:
Նամակում Կարնեցին սակայն, ուրախություն է
հայտնում հայ ժողովրդի և Մ. Գահի նկատմամբ
գեներալի բարի մտադրությունների համար,
նշում, որ ռուսական գործի գալստյանը հույսով
սպասում են և հնարավորինս կաջակցեն: Բայց
արշավող ռուսական բանակին ռազմական օգ-
նություն ցուցաբերել կարող են միայն Արցախի
մելիքները, որոնք «...յօժարությունը կամին և
սպասեն գալատեսան ձերում, որպես և մեք: Եւ ի
կողմանէ ուտելեաց ևս ունին գպատրաստու-
թիւն...»⁶:

Ռուսական գործի այսրկովկասյան արշա-
վանքների վերաբերյալ նմանօրինակ զգուշավո-
րությամբ Կարնեցին արտահայտվում է նաև Հ.
Արդոյանին գրած նամակում, որին խորհուրդ
է տալիս այնպես գործել, որ «սպազայում վնաս
չլինի» [15]:

Ղուկաս Կարնեցու նամակների խուսափո-
ղական բովանդակությունը դժգոհություն է
պատճառում հայ ազգային գործիչներին: Հովհ.
Լազարյանը 1783 թ. ապրիլի 12-ին կաթողիկոսին
իր զարմանքն է հայտնում Գ. Պոտյոմկինին

գրած նամակի բովանդակության կապակցու-
թյամբ, քանի որ լռության էին մատնված
Հայաստանի համար կարևոր քաղաքական
խնդիրները: Կարնեցին հայտնում է իր մտքի
էությունը. ռուսները դեռևս հեռու են, իսկ
պարսիկները, եթե իմանան իր ցանկությունների
մասին, ապա մեծ վնասներ կպատճառեն հայ
բնակչությանը: Ապա գրում է, որ ինքն աղոթում
է ռուսների մտադրությունների հաջողությամբ
իրականանալու համար [7]:

1783 թ. հուլիսին Արդոյանին գրած Կար-
նեցու մի նամակից տեղեկանում ենք, որ
արքեպիսկոպոսը կաթողիկոսին նախատել էր Պ.
Պոտյոմկինին գրած այն մտքի համար, թե ինքը
լոկ եկեղեցական է և քաղաքական իրադարձու-
թյուններից անտեղյակ: Հայոց կաթողիկոսը
նշում է կատարում՝ մեջբերելով իր խոսքը. «Այլ
մեր գրելն այսպես է, թե՛ մեք վանական և եկեղե-
ցական գորով ո՛չ ենք քաջ գիտակ աշխարհային
իրականությունաց» [1]:

Պատմագրության մեջ տեսակետ կա, որ Հ.
Արդոյանը ռուսներին Հայաստանի ազատա-
գրության գործի մեջ ներքաշելու նպատակով
կազմակերպում էր, որ կաթողիկոսի նամակները
թարգմանելիս դրանք դառնան ռուսական
ձեռնարկումներին միանգամայն համահունչ:
Այսպես օրինակ, Կարնեցու անորոշ պատաս-
խանք՝ Պ. Պոտյոմկինի 1783 թ. փետրվարի 15-ի
նամակին ի պատասխան, Արդոյանն այնպես
էր թարգմանել սովել, որ կաթողիկոսի երկիմաստ,
անորոշ մտքերի փոխարեն գրվում է. «...ողջ հայ
ժողովուրդը ցանկանում է հաղթական գործի գա-
լուստը և ուրախությամբ հույս ունի ազատա-
գրվելու»⁷:

Ազգային հարցերում զսպվածություն
ցուցաբերելու մեջ Կարնեցուն մեղադրում է նաև
հնդկահայ ազգային գործիչ Շահամիր Շահամի-
րյանը, որը նրան կոչ է անում որպես կաթողիկոս
զբաղվել երկրի ազատագրության հարցով: Նա
Մադրասում հիմնած տպարանում տպագրված
«Որոգայթ փառացի» օրինակ է ուղարկում Ղ.
Կարնեցուն, միաժամանակ ներկայացնում
Հայաստանն ազատագրելու իր ծրագիրը:

Կարնեցու պատասխան նամակը ներկա-
յացնում է հայկական իրականությունը, որը
հեռավոր հնդկաբնակ հայերի համար դժվար-
պատկերացնելի էր: Նա Շահամիրյանին նկարա-
գրում է պարսկա-թուրքական դաժան տիրապե-
տությունը, թշնամու մեծաքանակ լինելը,
ապստամբության վտանգավորությունը: Այնու-
հետև անդրադառնում է Ծ. Շահամիրյանի

⁶ Նամակն ամբողջությամբ հրատարակված է նաև Մ.
Ներսիսյանի խմբագրությամբ լույս տեսած փաստաթղթերի
ժողովածուի մեջ: [13, док. 153, с. 245].

⁷ Մեր ուսումնասիրության ընթացքում Կաթողիկոսի
նամակների բովանդակությունը Հ. Արդոյանի կողմից
վերափոխվելու վերաբերյալ որևէ այլ ստույգ փաստի չենք
հանդիպել: Սույն միտքն առաջին անգամ հանդիպել ենք Ա.
Հովհաննիսյանի մոտ, ումից հղում է կատարել Վ.
Գրիգորյանը: [15, с. 67-68, 7, էջ 63-64]:

հետևյալ դատապարտող արտահայտությամբ. «...*հանիք ընդ ծառայությունն այլազգեսաց և ոչ սիրէք զազատությունն*»: Կարնեցին պատասխանում է, որ եթե հնդկահայ հայրենասերները գան Հայաստան, շրջագայեն և ականատես լինեն հայերի կացությանն ու անօգնական վիճակին, թշնամիների բռնություններին, կհասկանան, թե ինչ դժվար է պայքարել ազատության համար. «...*մի՞թե յիմար իցեմք որ ի տառապանաց գերծանիլ չկամիցիմք*», - *հարցում է անում կաթողիկոսը*» [7; 9]:

Կարնեցու և Հ. Արղությանի միջև եղած նամակագրության քննությունը մեզ հնարավորություն է տալիս բացահայտելու կաթողիկոսի և ժամանակի հայ հասարակական-քաղաքական գործիչների քաղաքական հայացքների և կողմնորոշման հակադարձությունը [6]: Նրանք, լինելով Հայաստանը ռուսական զենքի օգնությամբ ազատագրելու հետևորդ, հանդես էին գալիս տարբեր դիրքորոշումներով: Արղությանը 1784 թ. մարտի 16-ին և մարտի 20-ին Պ. Պոտյոմկինին գրած նամակներում կարծիք է հայտնում, որ ռուսական զորքն Այսրկովկաս գալու նախօրեին անհրաժեշտ է տեղում բնակչության մեջ նախապատրաստական աշխատանքներ տանել, ժողովրդին զինել և միանալ ռուսներին: Արքեպիսկոպոսը 1783 թ. հուլիս, օգոստոս ամիսներին գրած և այլ թվակիր նամակներում կաթողիկոսին կրկին համոզում է ակտիվ քաղաքական գործունեության դիմել, նամակ գրել Գ. Պոտյոմկինին, ռուս պետական այլ գործիչների և հատուկ դիմում Եկատերինա կայսրուհուն՝ ռազմական օգնության խնդրանքով, ինչպես նաև ռուս-հայկական դաշինք կնքելու նախագիծ առաջարկել ռուսական կառավարությանը [13]:

1783 թ. սեպտեմբերի 5-ի նամակն արտահայտում է կաթողիկոսի կոշտ դիրքորոշումն Արղությանի հարցադրումներին: Նա հաղորդում է, որ ռուս-հայկական դաշնագրի մասին ո՞չ Գրիգորի, ո՞չ Պավել Պոտյոմկինները ոչինչ չեն ակնարկում: Նամակից կոահում ենք, որ Արղությանը նրան առաջարկել էր այդ հարցով դիմել «ազգին»³ հավանաբար նկատի ունենալով առաջադեմ գործիչներին: Կաթողիկոսը հետևյալ պատասխանն է տալիս. «...*որոնց հարցանեմ, ոչ ասաքէն բազումքն և գլխարքն են ընդ իշխանությունամք այլազգ թագաւորաց: Իսկ ի յերկրոջս մերում եղեալ ողորմելիքն ասարուտի կարօսին...: Ապա փոյթ չէ ցայսպիսի խղճալիսն հարցանել*» [13; 15]: Ղուկաս Կարնեցին այդպիսով Արղությանին պարզորոշ հասկացնում է, որ ռուսական պետությունը որևէ պայմանագիր չի կնքի պետականությունից զուրկ երկրի հետ: Նամակում կաթողիկոսը հերթական անգամ մերժում է ռուս գործիչներին նամակներ գրելու վերաբերյալ Արղությանի առաջարկները, իսկ Գ. և Պ.

Պոտյոմկիններին նոր նամակ չուղարկելը մեկնաբանում է ժամանակի սղոյթամբ:

Ստանալով խուսափողական պատասխաններ, ինչպես նաև ծանոթանալով Պոտյոմկինին ուղղած Կարնեցու 1783 թ. հունիսի 28-ի վերևում մեջբերված նամակի բովանդակությանը, Արղությանը նամակներով բացահայտորեն նախատում է կաթողիկոսին:

Դարձյալ սեպտեմբերի 5-ին, Կարնեցին, ի պատասխան վերևում նշված 1783 թ. ապրիլի 12-ին Հովհ. Լազարյանի գրած նախատինքնամակի, գրում է, որ ներկա քաղաքական իրավիճակում պետք է շրջահայաց ու զգույշ լինել. «*Չի ա՞րդ է մեզ կարելի յայսմ կասկածալից վայրի զամենայն ինչ ի թուղթ արձանագրուցանել*»: Նա տեղեկացնում է, որ ստացել է Լազարյանի գրությունը Գանձասարի կաթողիկոսության ու Արցախի մելիքների հետ թղթակցություններ վարելու խորհրդի վերաբերյալ: Կարնեցին գրում է, որ չի կարելի ամեն ինչի վերաբերյալ բացահայտորեն գրել նամակներում և նշում է, որ ցարդ Գանձասարի կաթողիկոսությունից նմանօրինակ պատրաստականության վերաբերյալ գրություն չի ստացել: Նշում է նաև, որ Պ. Պոտյոմկինից ստացած երկու նամակներին թեև չի կարողացել պատասխանել «*բառ մեր ըղձալի կամակցությունն յիսպէս*», սակայն ակնարկել է «*զրևդունդություն և գլօծարություն մեր ստ առաջիկայ գործն իրեանց*» [13]:

Կաթողիկոսի համար հստակ էր, որ Գանձասարի կաթողիկոսության ու Արցախի մելիքների հետ հարաբերությունների աշխուժացումը չէր կարող աննկատ մնալ պարսկական իշխանությունների ուշադրությունից և կարող էր մինչև ռուսական զորքի ժամանումն անդառնալի հետևանքներ ունենալ: Այդ է վկայում Լազարյանին գրած Կարնեցու այն տողերը, որ անգամ Գ. Պոտյոմկինը խուսափել է նամակում բացահայտ գրել քաղաքական իրադարձությունների վերաբերյալ: Այնինչ պարսիկները, եթե տեղեկանան «...*հետևանց մերոց ...սկսանին գիշատել զմեզ, յորոց բերանն իսկ կամք*» [13], - գրում է կաթողիկոսը՝ միաժամանակ խոստովանելով, որ սրտի մտքը սպասում է ռուսական օգնությանը: Դրա վառ ապացույցն է այն, որ նա, այնուամենայնիվ, Արցախի մելիքների ու Գանձասարի Հովհաննես Հասան-Ջալալյան կաթողիկոսի (1763-1786/1787) հետ համատեղ հանրագիր հղեց Պ. Պոտյոմկինին, որում խնդրում էին արագացնել սպասված արշավանքը և խոստանում ռուսական զորքին ապահովել պարենով» [14]:

Ղուկաս Կարնեցու և հայ ու ռուս գործիչների միջև գրված 1784 թ. նամակները գրեթե նախորդների բովանդակությունն են կրում: Մի կողմից ռուսական պետական գործիչները ձգտում էին ձեռք բերել կաթողիկոսի համա-

գործակցությունն իրենց հետագա քաղաքական նպատակներում, մյուս կողմից հայ գործիչները կաթողիկոսին համոզում էին ազգային-ազատագրական պայքարում դիմել ակտիվ գործունեության, աջակցել ռուսական արշավանքին: Ղուկաս Կարնեցին, մնալով նախկին դիրքորոշմանը, հիմնականում սահմանափակվում էր ռուս գործիչներին գրած շնորհակալական նամակներով, թեև երբեմն որոշակիորեն արտահայտում էր սպասելիքներ ռուսական արշավանքից:

Ռուսական արշավանքը դեպի Այսրկովկաս նախատեսված էր 1784 թ. ամռանը: Չնայած իր սպասողական դիրքորոշմանը, Կարնեցին արշավանքի նախօրյակին նամակներ հղեց ռուս գործիչներին՝ Գ. Պոտյոմկինին, գնդապետ Ստեփան Բուռնաշևին⁸ և այլոց՝ արտահայտելով իր գոհունակությունն առաջիկա արշավանքի վերաբերյալ [8]:

Մյուս կողմից կաթողիկոսը տեղյակ անձանց զգուշավոր կերպով հարցում էր անում ռուսական արշավանքի մասին: Հ. Արդուրյանը նրան մշտապես իրազեկում էր ռուսական հրամանատարության գործողությունների և գործի տեղաշարժի վերաբերյալ:

Սակայն ռուսական արշավանքները չիրականացրին հայ ժողովրդի ակնկալիքները և կաթողիկոսի նամակներում աստիճանաբար ավելի է ընդգծվում նրա խուսափողական դիրքորոշումը՝ ռուսական քաղաքականությանն աջակցելու հարցում:

1785 թ. փետրվարի 15-ին Հովհ. Լազարյանին գրած նամակում կաթողիկոսը հակադարձում է հերթական մեղադրանքներին: Նա գրում է, որ ռուսների հարցում հայերի հույսերի չարդարացումը ծաղրի առիթ կդառնա թշնամիների աչքում, հետևաբար նոր նամակներ հղելը Գրիգորի և Պավել Պոտյոմկիններին այլևս ավելորդ են [8]:

1789 թ. սեպտեմբերի 11-ին Ծ. Ծահամիրյանին գրած նամակում կաթողիկոսը ռուս-վրացական հարաբերությունների վերլուծմամբ և պատմական փաստերի համադրմամբ համեմատություն է կատարում: Ըստ այդմ իր եզրակացությունը հայտնելով, նա փաստում է, որ «*հյուսիսային մեծ տերությունը*» հուսալի չէ, քանի որ «*...վրաց արքան գորք թերեց այնտեղից, բայց օգուտ չտեսավ, և շրջակայքի բարբարոսները այդ պատճառով երկրին բազում ավերածություններ հասցրին*» [9]: Կաթողիկոսն ակնարկում էր 1783 թ. հուլիսի 24-ի Գեորգիևսկի ռուս-

վրացական դաշնագիրը⁹: Այստեղից նա հետևեցնում է, որ Ռուսաստանից հայությանն առայժմ օգուտ չի կարող լինել, իսկ եթե շրջակայքի թշնամիները տեղեկանան հայերի ձգտումների մասին, ավերածություններ ու կոտորած կիրականացնեն:

Այստեղ հարկ է ընդգծել կաթողիկոսի խորաթափանցությունը և դիվանագետի հմտությունները: Նա, ինչպես տեսնում ենք, մշտապես շեշտում է ռուսների հեռու լինելու հանգամանքը, ինչը հիրավի պետք է հաշվի առնեին հայ ազգային-ազատագրական շարժման գործիչները: Վաղաժամ ոգևորությունը ոչ միայն կգրավեր օտար տիրապետողների ուշադրությունը, այլև ավելորդ հուզումներ կառաջացներ բնակչության մեջ:

Մյուս կողմից, Կարնեցին շարունակում էր հետևել ավարտին հասնող ռուս-թուրքական պատերազմի ընթացքին, փորձում հասկանալ դրա ելքն ու ըստ այդմ կողմնորոշվել: Կաթողիկոսի մոտ ավելի ու ավելի էր մեծանում համոզմունքը, որ պատերազմը կավարտվի ռուսների ու թուրքերի հաշտությամբ, ինչը հայ ժողովրդին կդնի անշահեկան իրավիճակի մեջ: 1790 թ. հոկտեմբերի նամակում Կարնեցին Արդուրյանին ներկայացնում է իր մտավախությունները, գրելով, որ թուրքերն ակնհայտորեն հաշտություն կնքելու մտադրություն ունեն¹⁰, իսկ ռուսներն ընդառաջ գնալու միտում ունեն, հետևաբար գերադասում է սպասել այդ ամենի արդյունքին [9]: Տուրք չտալով ռուսահայ հոգևոր առաջնորդի ոգևորվածությանը, կաթողիկոսը մերժում է Արդուրյանի առաջարկը՝ նամակներ գրել Բեսարաբիայում¹¹, ռուս-թուրքական մարտի դաշտում գտնվող Գ. Պոտյոմկինին և այլոց:

Այս ժամանակաշրջանը համընկավ Պարսկաստանում Ղաջարների հարստության հիմնադիր Աղա Մուհամադ խանի (1743-1797, 1796 թվականից շահ) այսրկովկասյան արշավանքների հետ: Աղա Մուհամադը Գեորգիևյան դաշնագիրը չեզոքացնելու համար 1795 թ. ավերիչ արշավանք ձեռնարկեց դեպի Վրաստան:

Խանի արշավանքները հակընդեմ էին Այսրկովկասում ազդեցություն հաստատելու ռուսական նպատակներին և 1796 թ. գարնանը ռուսական զորքերը գեներալ Վալերիան Չուբովի գլխավորությամբ շարժվեցին դեպի Այսրկովկաս: Ռազմարշավը հաջող ընթանալու և նպատակին

⁸ Ս. Բուռնաշևը «կոմիսիոնների» պաշտոնով նշանակում էր ստացել Վրաստանում: Նա կարգադրություն ուներ նախապատրաստել ռուսական արշավանքը: 1783 թ. մայիսին գեներալ Պ. Պոտյոմկինը Ս. Բուռնաշևին կարգադրել էր ռուսական զորքերի համար Անդրկովկասում մթերքների պահեստներ նախապատրաստել:

⁹ Դաշնագրով Քարթլի-Կախեթի միացյալ թագավորությունն անցնում էր Ռուսաստանի հովանավորության ներքո, իսկ Ռուսաստանը պարտավորվում էր գորք մտցնել Վրաստան՝ այն պաշտպանելու նպատակով:

¹⁰ Ռուս-թուրքական պատերազմն ավարտվեց 1791 թ. դեկտեմբերի 29-ի Յասսիի պայմանագրով:

¹¹ Բեսարաբիա-Դնեստր և Պրուտ գետերի միջև ընկած շրջանը, ներկայիս Մոլդովայի տարածքի մեծ մասը և Ուկրաինայի Օդեսայի մարզի հարավային մասը:

ծառայելու համար ռուսական իշխանությունները, ինչպես միշտ, ձգտում էին օգտագործել ռուսական կողմնորոշում ունեցող գործիչների, այդ թվում հայոց կաթողիկոսի ազդեցությունը: 1796 թ. հոկտեմբերի 10-ին գեներալ Վ. Չուբովը Ղուկաս Կարնեցուն գրած նամակում կոչ է անում ընդառաջել ադա Մուհամադ խանի դեմ ուղղված ռուսների արշավանքներին [13]:

Սակայն 1796 թ. նոյեմբերի 6-ին վախճանվեց Եկատերինա կայսրուհին:

Ղուկաս Կարնեցին չշտապեց հույսեր կապել նոր գահակալ Պավել Առաջինի (1796-1801) հետ: Գահ բարձրանալով, նա ռուսական գործին Վրաստանից վերադարձի հրաման տվեց, ինչն անհանգստացրեց Ղուկաս Կարնեցուն: Վերջինս որդեգրեց առավել զգույշ քաղաքականություն՝ ելնելով թուրքական ու պարսկական իշխանություններին հայ ժողովրդի դեմ անհարկի չտրամադրելու միտումից:

Այսպիսով, Կարնեցին ի տարբերություն հասարակական, քաղաքական ու հոգևոր շատ հայ գործիչների, զգուշություն ու զսպվածություն դրսևորեց ռուսների օգնությամբ Հայաստանն ազատագրելու հարցում: Կաթողիկոսի վերաբերմունքը դեպի հայ ազգային ազատագրական շարժումն ուներ ըստ ամենայնի հիմնավորում: Լինելով իրատես ու հեռատես գործիչ, նա վստահ չէր, որ ռուսական արշավանքը նպատակին կձառայեր և հայ բնակչությունը չէր հայտնվի թուրք-պարսկական վրեժխնդրության թիրախում: Երկիրն ազատագրելու համար նախևառաջ հարկավոր էր գործ, ինչը չկար: Միակ ուժը Արցախի մելիքներն էին իրենց գործով, սակայն նրանք տվյալ պահին Ղարաբաղի խաների կողմից հալածված՝ հեռացել էին Վրաստան և այլ վայրեր:

Կաթողիկոսն անգամ խուսափում էր ռուսական պետական այրերին բացահայտ գրել ռուսական գեներալներին իր ներքին պատրաստակամությունն ու խոստումներ տալ, զգուշանալով, որ նամակները կարող են պարսիկ և թուրք պաշտոնյաների ձեռքն ընկնել¹²: Տարբեր վայրեր գրած նրա գրությունները սոսկ ժլատ տեղեկություններ են պարունակում՝ մեկ նախադասությամբ ծանուցելով պարսկական արշավանքների հետևանքով Էջմիածնի դրության մասին [2; 4]:

Այդ պատճառով հայ պատմագրության մեջ Ղուկաս Կարնեցուն տրվել են իրարամերժ գնահատականներ՝ մեծարանքի ու դրվատանքի

խոսքերից մինչև ամենաճանր մեղադրանքներ: Ինչպես տեսանք, ժամանակի հայ շատ գործիչներ նրան բացահայտեցին կշտամբել են ռուսներին և հայ ազգային-ազատագրական շարժմանը չընդառաջելու մեջ: Ղուկաս Կարնեցու պատասխան նամակների համառոտ ու զգույշ լինելու պատճառը Լեոն համարում է «մահմեդական տիրողների ահը» [10]: «...*Վախկոտությունը, զգուշությունն ու անվճռականությունը նրա բնավորության ամենաբնորոշ գծերին էին*» [15], - գրում է Ա. Հովհաննիսյանը՝ միաժամանակ նրան համարելով շփվող և փառասիրությունից հեռու մարդ:

Ղուկաս Կարնեցու նամակների հրատարակիչ Գյուտ Աղանյանը ժխտում է Կարնեցու նկատմամբ հնչած քննադատական մեղադրանքները. «...*շատ փայր ի վերոյ տեղեկություններ կան գրականության մեջ և եղածների մի մասն էլ աննպաստ նորան: Մեզանից առաջ ոմանք արդեն փորձել են պաշտպանել երջանկայիշատակ Հայրապետիս բարի անունը յարձակմունքների դեմ և սպա մենք հրատարակելով «Դիւան»-ի Ա.-Բ. գրքում քանի մի կարեւոր կենսագրական նիւթեր Ղուկաս հայրապետի վերաբերեալ՝ մթութեան քողի ծայրը բարձրացրինք այդ բազմաչարչար անձնատրութեան վերայից*» [5]:

Մ. Օրմանյանը գրում է, որ Կարնեցին «...*չհամարձակվեց արկածախնդիր ձեռնարկների մասնակցել*»՝ նկատի ունենալով այն փաստը, որ կաթողիկոսն Արդուշյանի և Լազարյանի առաջարկներին հակառակ՝ լոկ օգնության խնդրանքներ գրեց ռուսներին» [12]:

Այսպիսով, քաղաքական հարցերում ցուցաբերելով զսպվածություն, բացահայտորեն չհովանավորելով ու չիրախուսելով ապստամբական շարժումը, կաթողիկոսը սակայն հույսեր էր փայփայում, որ ռուսական արշավանքը կիրականանա: Նրա քաղաքական հայեցակարգում հստակորեն զգացվում է ռուսական կողմնորոշումը և նրա մտադրությունները՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրել Արևելյան Հայաստանը (Պատահական չէ, որ Գ. Պոտյոմկինի մահը Ղ. Կարնեցու համար մեծ կորուստ էր Հայաստանի ազատագրության ճանապարհին), քանի որ կաթողիկոսն արտաքին ուժերից հույսեր էր կապում միայն Ռուսաստանի հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մերոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (ՄՄ), ձեռ. Հ^մ 2803, թ. 332:
2. ՄՄ, Հ^մ 4424, թ. 100բ,
3. ՄՄ, ձեռ. Հ^մ 4496, թ. 7ա:
4. ՄՄ, ձեռ. Հ^մ 4538, թ. 3ա:

¹² Կարնեցին անգամ ռուսական գործակալ Յ. Ռեյնգզին կորականապես արգելեց բնակվել Էջմիածնում՝ հաշվի առնելով այն դժվարին կացությունը, որի մեջ կհայտնվեր Էջմիածնի վանքը, եթե ռուսական ծառայության մեջ գտնվող եվրոպացիներ հաստատվեին Էջմիածնում: Նա խուսափեց անգամ թույլատրել Հ. Արդուշյանին ժամանել Ս. Աթոռ, հասկանալով, որ ռուսամետ գործչի այդը կասկածների տեղիք կտար պարսիկներին:

5. **Աղանեանց Գ.**, Դիւան հայոց պատմութեան: – Թիֆլիս, Դ, 1899, 326 էջ:
6. **Ամիրջանյան Հ.**, Հովսեփ արքեպիսկոպոս Արղու-թյանի նամակագրութիւնը Ամենայն Հայոց կաթողիկոս Դուկաս Կարնեցու հետ (XVIII դ. վերջ), «Պատմարանասիրական հանդես», 2017, N 1:
7. **Գրիգորյան Վ.**, Երևանի Խանութիւնը XVIII դ. վերջում, Երևան, 1958, 225 էջ:
8. Դիվան Հայոց պատմութեան, աշխատասիրութեամբ **Վ. Գրիգորյանի**: – Եր., հ. Ա, 1984, 596 էջ:
9. Դիվան Հայոց պատմութեան, աշխատասիրութեամբ **Վ. Գրիգորյանի**: – Եր., հ. Բ, 2003, 804 էջ:
10. **Լեո**, Հայոց պատմութիւն, հ. 3: - Եր., 1973, 638 էջ:
11. Հայոց պատմութիւն, հ. 3, գիրք առաջին, Երևան, 2010, 704 էջ:
12. **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Բ, 1914: – Կոստանդնուպոլիս, 3376 էջ:
13. Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.), под ред. **М. Нерсисяна**, т. IV. – Ер., 1990, 590 с.
14. **Дубровин Н.**, История войны и владычества русских на Кавказе, часть 2. – С. Петербург, 1886, 318 с.
15. **Иоаннисян А.**, Россия и армянское освободительное движение в 80-ых годах XVIII столетия. – Ер., 1990, 195 с.

Տժննդ/Հանձնվել է 25.01.2021
Рецензирована/Գրախոսվել է 28.01.2021
Принята/Ընդունվել է 30.01.2021